ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/70 «02» 02 2023թ.

Ձեր

**ԱՐՄԵԴ - ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

ՀՐԱՎԵՐ

«ԱՐՄԵԴ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **էլեկտրոնային առողջապահության համակարգի ծառայություններ:**

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ 2023 թվականի ԲՎ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր ՓԲԸ-ի ունի.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

6. Համակարգի տեխնիկական կառավարում և բարելավում սերվերային, ցանցային և տեխնիկական ենթակառուցվածքի պահպանում և շահագործում, դրանց կազմի և կառուցվածքի բարելավման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, պահպանում և վերազինում:
7. Բաժանորդների և օգտագործողների սպասարկում մշտապես գործող սպասարկման կենտրոն միջոցով Ծրագրակազմ սպասարկում համակարգի ծրագրային ապահովման անխափան շահագործում, ծրագրային գործիքակազմի շարունակական բարելավում, ծրագրային թարմացումների ձեռքբերում ծրագրային ապահովումների մատակարար հանդիսացող ընկերություններից:

Ձեզ է ուղարկվում **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2023-ԲՎ/ԱՐՄԵԴ/Ա-10** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը և հայտը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**